ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1958 Общественные науки

ԴԻՏԱԿԱՆ ԷՐԱՏՈՒՄ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱԲԻՆԵՏՈՒՄ

Վերջերս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայրենական Մեծ պատերազմում պարտիզանական շարժմանը մասնակցած պարտիզանների հավաք-հուշերի երեկո։

Հավաքին մասնակցում էին ավելի քան 150 պարտիզաններ։

Հավաքը բացեց Պատմության ինստիտուտի Սովետական հասարակության պատմության սեկտորի վարիչ Ա. Հակոբյանը։

Զեկուցումով հանդես եկավ Հայրենական պատերազմի պատմության կաբինետի վարիչ Ն. Խալեյանը։ Նա իր զեկուցման մեջ կանգ առավ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին թշնամու թիկունքում, ինչպես նաև արտասահմանում գործած հայ պարտիզանական մի շարք ջոկատների պատմության վրա, նշեց այն անգնահատելի դերը, որ կատարել են օկուպացված Ղրիմի, Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լենինգրադի մարզի, Մերձբալթիկայի և մյուս շրջաններում սովետական պարտիզանները, պարտիզանական միավորումները, այդ թվում նաև հայ պարտիզանները։

Զեկուցողը հիշատակեց, ռազմադերիների շրջանում ընդհատակյա լավագույն կազմակերպիչ հայ ժողովրդի անմահ զավակ, 1917 թ. կոմպարտիայի անդամ, 113-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ մայոր Քրիստափոր Ալավերդյանի անունը, որը չնայած անասելի տանջանքներին, դարձել է սովետական ռազմադերիների ընդհատակյա կազմակերպության անդամ, համախմբել է զերիներին՝ թիկունքում թշնամու դեմ պայքարելու համար։

Սովետական հայրենասերների ընդհատակյա համարձակ ու անվախ գործիչներից էր նաև կադրային սպա Մուշեղ Մալխասյանը, որն իր պայքարը շարունակեց պարտիզանների ու Սովետական բանակի մարտական շարքերում՝ ընդդեմ ֆաշիզմի։

Զեկուցման մեջ մեծ տեղ է հատկացվում Կովպակի և ապա Վերշիդորայի հրամանատարությամբ Ուկրաինայում և Բելոռուսիայում գործած պարտիզանական միավորման հայ ռազմիկներից «Հաղթանակ» («Պոբեդա») պարտիզանական վաշտի գործունեությանը, որի հրամանատարն էր նախկին մանկավարժ Սերգեյ Հարությունյանը։

Այնուհետև հիշատակվում է Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը, որը գործում էր Սովետական Միության Հերոս, գեներալ-մայոր Մ. Ի. Նաումովի հեծյալ միավորման կազմում՝ Ուկրաինայում։

Հայ պարտիզանները սխրագործություններով աչքի են ընկել նաև Կիրովի անվան պարտիզանական բրիգադում, Վորոշիլովի անվան ջոկատներում։

Առանձին հայկական պարտիզանական ջոկատներ են գործել Մերձբալթյան ռեսպուբլիկայում գործող պարտիզանական խմբերում, Բրյանսկի անտառներում, «Սև անտառ» պարտիզանական ջոկատներում և Ղռիմում։

Զեկուցման մեջ առանձնակի տեղ է հատկացվում նաև Սփյուռքի հայության օգնությունը Հայրենական պատերազմին։

Արտասահմանյան հայությունը պատերազմի տարիներին ստեղծեց իր պրոգրեսիվ կազմակերպությունները, ակտիվ մասնակցություն ցուցաբերելով ֆաշիզմի դեմ մղվող պայքարին. Ֆրանսիայում, Բուլգարիայում, Հարավսլավիայում, Հունաստանում։ Անմար փառքով է պսակված ֆրանսիական «Ինտերնացիոնալ» ջոկատի հրամանատար, ֆոմունիստ, բանաստեղծ Միսաք Մանուշյանի անունը, որին 1944 թ. փետրվարին գնդակահարեցին գեստապոյականները։

Բուլգարիայում հայտնի է պարտիզանուհի Հերմինե Ռազկրտչյանի անունը («Սալկա» ծածկանունով), որն ընկավ 1944 թ. հունիսի 10-ին թշնամու դեմ մղվող մարտում։

Վերջում զեկուցողը կանգ է առնում նաև 1943—44 թթ. Ֆրանսիայում գործող առաջին սովետական պարտիզանական գնդի գործունեության վրա։

Զեկուցումից հետո հետաքրքիր հուշեր պատմեցին պարտիզաններ՝ Բ. Պետրոսյանը, Հ. Պետյանը, Լ. Տիտանյանը, Հ. Մարտիկյանը, Գ. Ստեփանյանը, Ա. Հոսեփյանը, Վերա Հովսեփյանը, Ռ. Մանուկյանը, Շ. Տատուրյանը, Բ. Գալստյանը և ուրիշներ։

Ընթերցվեցին Սովետական Միության Հերոս Դավիթ Բաքրաձեի և «Հաղթանակ» պարտիզանական ջոկատի հրամանատար Սերգեյ Հարությունյանի ողջույնի հեռագրերը՝ ուղղված երեկոյի մասնակիցներին։ Երեկոյի մասնակիցները ողջույնի հեռագրեր ուղարկեցին Սովետական Միության Կրկնակի Հերոս Ս. Ա. Կովպակին, Սովետական Միության Հերոսներ, գեներալներ Ս. Ի. Նաումովին, Պ. Հ. Վերշիգորային, Սովետական Միության Հերոս Դավիթ Բաքրաձեին, պարտիզանական ջոկատի հրամանատարներ Հարություն Սաղումյանին և Սերգեյ Հարությունյանին։

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի հնագիտական ուսումնասիրության պատմության մեջ 1957 թ. մտավ որպես խոշոր գյուտերի տարի։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ս. Սարգսյանը Էջմիածնի, Աշտարակի, Թալինի շրջաններում հնագույն բնակավայրերի պեղումներով երևան է բերել զգալի քանակությամբ առաջնակարգ նյութեր, որոնք բնութագրում են նոր քարե դարի դոյությունը Հայաստանում։

Հայաստանը բրոնզի խիստ զարգացած մշակույթի երկիր է եղել։ Նրա տերիտորիայի վրա ափված են բրոնզի մշակույթի հուշարձաններ, որոնց մի զգալի մասը տեղադրված է Սևանա լճի ավազանում։ Բրոնզի մշակույթի ուսումնասիրության տեսակետից բացառիկ նշանակություն ունեն Լճաշեն գյուղի մոտ Սևանա լճի ցամաքած տարածության վրա հայտաբերված հուշարձանները, մասնավորապես կուրգանների (գերեզմանաբլուր) և կրոմլեխների 1956—1957 թթ. պեղումներով ձեռք բերված նյութերը։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պետական պատմական թանգարանի հնագիտական արշավախումբը, պատմական գիտությունների թեկնածու Հ. Մնացականյանի ղեկավարությամբ՝ շարունակելով Լճաշեն գյուղի մոտ 1956 թ. սկսած պեղումները, 1957 թ. պեղել է վեց կուրգան և մոտ 20 կրոմլեխ։ Գրեթե երեք հազար տարի ջրի տակ անվթար պահպանված այդ հուշարձանները իրենց պարունակած առաջնակարգ նյութերով գիտական մեծ արժեք են ներկայացնում Հայաստանի այդ ժամանակաշրջանի պատմության գիտական լուսաբանության համար։ 1957 թ. Լճաշենում պեղված կուրգաններն ու կրոմլեխները հետաքրքիր են թաղման ձևերի, դամբարանների կառուցողական, շինարարական առանձնահատկությունների, ինչպես նաև բնիկների հոգևոր մշակույթի՝ պաշտամունքի առանձին կողմերի լուսաբանության տեսակետից։ Պեղումներով բացված բնահողային (գրունտային) թաղումները, կրոմլեխներն ու կուրգանները հասարակական շերտավորման վառ իլյուստրացիա են հանդիսանում։ 1957 թ. Լճաշենում բացվել են մ.թ.ա. XI դ. թվագրվող գրունտային՝ հողի կորբված մեջ արված թաղումներ, որոնք պարունակում են միայն կենդանիների՝ այծի, ոչխարի, եզան գանգեր և կարմիր ֆոնի վրա սև գծերով արված գունազարդ խեցեղեն, որ բնորոշ է վաղ բրոնզի ժամանակաշրջանի համար։ Հնագիտական նյութերով աղքատ չեն հնագիտության մեջ կրոմլեխ անունով հայտնի թաղումները։ Լճաշենի կրոմլեխները սովորաբար ձախ կողքի վրա պառկեց-